ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ՝ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԹՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ
ՆԳՆ կրթահամալիրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու
DOI: 10.61746/18292984-2026.1.28cmt-03

Ամփոփագիր. Ներկա հոդվածը նվիրված է *հայրենական քաղաքագիտության* հիմնարար, ելակետային հասկացություններից մեկի՝ **հայրենական քաղաքական համակարգի** *ընդհանրական մոդելի* տեսական և մեթոդաբանական ուսումնասիրությանը: Թե ինչպես են հայ ազգային էթնորոշ՝ տարածքի, ծագման, լեզվի, հոգեկերտվածքի և հանրորոշ՝ տնտեսական կյանքի, սոցիալ-խմբային կառուցվածքի, գաղափարախոսության հատկանիշները նախ՝ դրսևորվում Հայաստանի Հանրապետության գործող քաղաքական համակարգում, ապա երկրորդ հետազոտությամբ՝ թե ինչպես են քաղաքական հատկանիշները վերածվում քաղաքական ենթահամակարգերի, երրորդ հետազոտությամբ կատարվում է համեմատական վերլուծություն ՀՀ և հայրենական քաղաքական համակարգերի: Գալիս ենք այն եզրակացության, որ.

- Հայրենական քաղաքական համակարգը հնարավորություն է տալիս ներառել ոչ միայն հայագիտական բոլոր տեսական մշակումները, այլև գիտության տարբեր ոլորտներում գործող հայ գիտնականների աշխատանքները՝ ապահովելով դրանց համակարգումը, ինստիտուցիոնալ ներդրումն ու գործառնական կիրառումը հայրենական քաղաքական համակարգի կառուցվածքային և գաղափարական ամբողջականության շրջանակներում՝ պահպանելով հայրենական արժեքների ամբողջականությունը:
- Արհեստական բանականության, աշխարհաքաղաքական համամարդկայնացման պայմաններում, ազգերի մերձեցման, ինտերնացիոնալացման, ձուլման մարտահրավերներին զուգահեռ, ապագայում կրկին կձևավորվի *նեոազգայնացման* քաղաքական ժամանակակից պահանջը, որի արդյունքում կգերագնահատվեն ազգային բոլոր հատկանիշները: Այդ տրամաբանությամբ *նորից կձևավորվեն* ազգեր, *կկազմավորվեն նոր տիպի ազգային պետություններ,* որոնք կստանան իրենց ինքնատիպ քաղաքական սուբյեկտայնությունն արդի միջազգային հարաբերությունների համակարգում: Համաձայն նոր պահանջների՝ հայոց

պետությունը, շնորհիվ իր ազգային հատկանիշների և հայրենական համակարգի, կունենա իր հստակ դիրքավորումը միջազգային քաղաքական նոր դաշտում:

- Ազգի ընդհանրության ծագման գիտական մոտեցումը ձևավորում է այն հեռանկարը, որ էթնոգենետիկայի և գենետիկայի արագ զարգացումն ապագայում կարող է վերածվել մարդկության ինքնաճանաչման ու էթնիկ պատկանելության նոր հիմքի: Դրա արդյունքում աշխարհում հնարավոր է նոր տեսակի ազգային խմբավորումների ձևավորում, որոնք կհենվեն ոչ միայն պատմական հիշողության և մշակութային ինքնագիտակցության, այլև գենետիկ ինքնության գիտականորեն հիմնավորված համադրությունների և ինքնաճանաչման վրա: Այս գործընթացները կարող են հանգեցնել քաղաքական նոր տեղաշարժերի՝ ընդհուպ նեոազգային պետությունների ձևավորման:

Բանալի բառեր. հայրենական քաղաքագիտություն, հայրենական քաղաքական համակարգ, հայ ազգային հատկանիշներ, նեոազգայնացում, նոր ազգային պետություն

Քաղաքագիտությունը հետազոտում է քաղաքական կյանքը, որը շահերի հիմքով կառուցված, անընդհատ շարժման ու փոփոխման մեջ գտնվող իրականություն է, որտեղ հասարակական հարաբերությունները ձևավորվում են իշխանության, ուժերի և արժեքների բախման, համագործակցության կամ մրցակցության արդյունքում: Քաղաքական կյանքը դինամիկ դաշտ է, որտեղ գործառնվում են հասարակական կյանքի բոլոր՝ նյութական (տնտեսություն, ռեսուրսներ), հոգևոր (գաղափարախոսություններ, ինքնություն, իրավունքներ) և սոցիալական (մարդը և ինստիտուցիոնալ խմբերը) արժեքները: Այս արժեքների փոխազդեցությունն է ձևավորում քաղաքական որոշումների բովանդակությունն ու տրամաբանությունը, ինչն էլ որոշիչ դեր է ունենում պետությունների քաղաքական ուղղության ձևավորման մեջ:

Հոդվածի նպատակն է քաղաքական ուղղության ձևավորման համատեքստում հիմնավորել և զարգացնել **հայրենական քաղաքագիտությունը**՝ այն ներկայացնելով ոչ միայն որպես քաղաքական գիտելիքի գիտական համակարգ, այլև որպես կրթական-մեթոդաբանական մոտեցում, որը կոչված է ձևավորելու քաղաքական գիտակցություն և քաղաքական վարք հայ հասարակության մեջ՝ նպաստելով քաղաքական մտածողության զարգացմանը: Այդ համատեքստում քաղաքական գիտությունը ներկայացվում է որպես հայի մտածողությանը և արժեհամակարգին հարազատ գիտական համակարգ՝ հիմնված հայրենագիտության, հայագիտության և *Հայոց ազգային արժեքային համակարգի վրա*:

Քաղաքագիտության դասական կատեգորիաներին համընթաց՝ հայրենական քաղաքագիտությունը ձևավորում է նաև իր հատուկ (սեփական) կատեգորիալ ապարատը՝ հաշվի առնելով տվյալ ժողովրդի ազգային առանձնահատկությունները, կոնկրետ պետության քաղաքական պատմության, տնտեսական, մշակութային և սոցիալական զարգացման մակարդակը:

Այսպիսով՝ սեփական երկրի գիտական, գրական, քաղաքական ու մշակութային ավանդույթների, ինչպես նաև դրանց բովանդակության մեկնաբանությունների հիման վրա ձևավորվում է «Հայրենական քաղաքագիտությունը»[1]՝ որպես *ներպետական քաղաքականության ուսումնասիրությամբ զբաղվող ինքնուրույն գիտական ուղղություն:*

«Սևեռուն գաղափարներ» ու միջանցիկ խնդիրներ, որոնց լուծումներն ամեն անգամ նորովի դրսևորվել են որպես քաղաքական պատմություն, որի մեջ զուգակցված պահված են եղել մտավոր ավանդույթները: Այդ *մտավոր ավանդույթներն* են, որ ձևավորում են քաղաքական գիտության հայրենական ձևը»[2]:

Հայ ժամանակակից մտածողներն[3] իրենց աշխատություններում անդրադարձել են տարբեր դարաշրջանների հայ մտածողների ու գործիչների քաղաքական հայացքներին, տարբեր գաղափարախոսական շարժումներին պատկանող հայ մտավորականների, հայրենիքի քաղաքական ճակատագրին վերաբերող հայացքներին:

«Մտավոր ավանդույթների» ներդրումը մեզանում սկսվել է մինչքրիստոնեական ժամանակաշրջանից մինչև այժմ՝ քրիստոնեական ժամանակաշրջան՝ ենթարկվելով էվոլյուցիայի, առանձին փուլերով ու դրվագներով, որտեղ մշակվել են նույնիսկ քաղաքական բանաձևեր՝ հայ ազգի ամենաարդի խնդիրներին վերաբերող, ինչպիսիք են քաղաքական հայագիտությունը, հայկական հարցը, ազգային գաղափարախոսությունը և այլն:

Ներկա հոդվածը նվիրված է *հայրենական քաղաքագիտության* հիմնարար, ելակետային հասկացություններից մեկի՝ **հայրենական քաղաքական համակարգի** տեսական և մեթոդաբանական ուսումնասիրությանը:

Հետազոտության նպատակն է բացահայտել՝

---

[1] https://vuzlit.com/936567/otechestvennaya_politologiya հասանելի է 18.12.2025

[2] М.В. Ильин, Отечественная политология: осмысление традиции //Политическая наука: Сб. научных трудов/РАН. ИНИОН. – М., 2001, с. 5-6.

[3] Տե՛ս Հ. Մանուչարյան, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Եր., ԵՊՀ հրատ., 2002:
Կ. Միրումյան, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմությունից, Եր., 2013:

1. Թե ինչպես են հայ ազգային հիմնարար հատկանիշները դրսևորվում Հայաստանի Հանրապետության գործող քաղաքական համակարգում:
2. Միաժամանակ, հոդվածը նպատակ ունի տեսականորեն հիմնավորել այն մոտեցումը, ըստ որի՝ ազգային հատկանիշները կարող են փոխակերպվել քաղաքական ենթահամակարգերի, որոնց համադրության և ամբողջացման միջոցով *հնարավոր է կառուցել հայրենական քաղաքական համակարգի ընդհանրական մոդել,* որը կարող է ապահովել ազգի քաղաքական ինքնության պահպանումը, վերարտադրությունը և կենսունակությունը պատմական-քաղաքական բոլոր ժամանակահատվածներում:
3. Հոդվածում ուշադրություն է դարձվում Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի և հայրենական քաղաքական համակարգի համեմատական վերլուծությանը՝ բացահայտելով դրանց ընդհանրություններն ու սկզբունքային տարբերությունները:

Քաղաքական համակարգ հասկացությունն ավելի տարողունակ է, քան պետական կառավարում հասկացությունը, քանի որ ընդգրկում է բոլոր մարդկանց և բոլոր ինստիտուտները, որոնք մասնակցում են քաղաքական գործընթացներին[4]:

«Հայրենական քաղաքական համակարգը» կարող է սահմանվել որպես քաղաքական համակարգ, որը կառուցված է հայ ժողովրդի պատմական փորձառության, հոգևոր-մշակութային արժեհամակարգի, ինքնության հատկանիշների և հավաքական կեցության սկզբունքների վրա՝ նպատակ ունենալով ապահովել ազգային ամբողջական, ինքնիշխան և կազմակերպված գոյությունը: Այն ոչ թե պարզապես ՀՀ քաղաքական համակարգի պետական-իրավական կառուցվածքն է, այլ, ազգային ինքնությամբ պայմանավորված, քաղաքական իշխանության իրականացման ու հասարակական-քաղաքական կյանքը կազմակերպող, կարգավորող մոդել է**:**

«**Հայրենական քաղաքական համակարգ**» ձևակերպումը դասական «քաղաքական համակարգ» հասկացության ազգային-հայրենագիտական մեկնաբանությունն է: Եթե կառուցում ենք այն **հայրենագիտության, հայագիտության և Հայոց արժեքային համակարգի հիմքով**, ապա քաղաքական համակարգի ենթահամակարգերը կարող են լինել նաև ազգային առանձնահատկություններով արտացոլված: Այստեղ հարկ ենք համարել հետևել քաղաքագետ Հ. Մանուչարյանի հայ ազգային հատկանիշների գիտական մշակմանը, ով, ելնելով տարբեր ժողովուրդների, ազգերի և ազգությունների միջև փոխհարաբերությունների, նրանց միջև իրավական անհավասարությունների ու դրանց վերացման, բազմազգ պետությունների

[4]П. Шаран, Сравнительная политология, 1992, часть 1, стр 47.

դաշնակցային հարաբերությունների, համատեղ կյանքի ու աշխատանքի, համաժողովրդական խնդիրների լուծման ռազմավարություններից ու քաղաքական պահանջներից, *ձեռնարկել է սոցիալիստական հայ ազգի հատկանիշների ուսումնասիրության գործը*: Նա եկել է այն եզրակացության, որ ազգը բնութագրող հիմնական հատկանիշները պետք է քննել *երկու խումբ օրինաչափություններով*՝ առաջին խմբում ընդգրկելով այն հատկանիշների ամբողջությունը, որոնցով մի ազգը տարբերվում է ուրիշներից՝ դրանց անվանելով էթնոտարբերիչ հատկանիշներ, որի մեջ մտնում են տերիտորիայի, ծագման, լեզվի և հոգեկան կերտվածքի ընդհանրությունները: Երկրորդ խմբում ազգի հատկանիշներն անվանելով հանրորոշ՝ նկատի է ունեցել ազգի տնտեսական կյանքի, սոցիալ-դասակարգային կառուցվածքի, քաղաքական համակարգի և գաղափարախոսության ընդհանրությունները[5]:

Սոցիալիստական ժամանակաշրջանում հայ ազգի բնութագրիչ հատկանիշները ձևակերպվել և վերարտադրվել են սոցիալիստական գաղափարաբանության ու կառավարման մեխանիզմների շրջանակներում: Քաղաքագետի կողմից նրանց տրված իմաստավորումն ու գործառնականացումը նպատակ ունեին ազգի ինքնությունը ներդնել սոցիալիստական քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ և մշակութային կեցության մեջ:

Ժամանակակից փուլում, երբ Հայաստանն անցում է կատարել դեպի կապիտալիստական տնտեսավարման և բազմակենտրոն հասարակական-քաղաքական համակարգ, առաջանում է նոր անհրաժեշտություն՝ ազգային նույնականության ամբողջական համակարգը *վերաիմաստավորելու և վերակառուցելու* արդի քաղաքական կառավարման տրամաբանության մեջ: Այս պայմաններում.

- *Էթնիկ կենսամշակութային հատկանիշները* համեմատաբար կայուն են և պահպանում են երկարատև ինքնության հիմքեր և կարող են ենթարկվել աստիճանական էվոլյուցիայի՝ պայմանավորված ազգի ներքին սոցիալ-մշակութային զարգացման բնական ընթացքով:
- *Հանրային՝ քաղաքացիական հատկանիշներն* առավել դինամիկ են, ձևափոխվում են ըստ հասարակության աշխարհաքաղաքական միջավայրի փոփոխությունների, տնտեսական կառուցվածքի, ինստիտուցիոնալ զարգացման մակարդակի և գլոբալացման ազդեցությունների:

Հետևաբար, քաղաքական համակարգի արդի կառուցումն ու վերաձևավորումը պետք է իրականացվի ավելի ճկուն՝ հաշվի առնելով ինչպես էթնիկ հատկանիշների համեմատական կայունությունը, այնպես էլ հանրային-քաղաքացիական հատկանիշների փոփոխական ու

[5] Տե՛ս Հ. Մանուչարյան, Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Եր., 1988, էջ 5-6:

հարմարվող բնույթը, որպեսզի ապահովվի ազգային ինքնության ամբողջական ներառումը ժամանակակից քաղաքական ցանկացած համակարգերի մեջ:

Ներկա աշխատանքում նպատակաուղղվեցինք ստեղծել մի քաղաքական համակարգի մոդել, որտեղ ազգային էթնորոշ և հանրորոշ հատկանիշները կգործառնվեն ազգային հանրորոշ հատկանիշ կոչվող՝ քաղաքական համակարգում՝ արդյունքում ի հայտ բերելով մի այնպիսի համակարգային մոդել, որը կկոչվի հայրենական քաղաքական համակարգ: Այդ մոդելը նպատակ ունի գործառնել ազգային ինքնության երկու շերտերը՝ *որպես փոխազդող և համակարգ ձևավորող գործոններ,* որոնք համատեղ կարող են ապահովել քաղաքական համակարգի յուրօրինակ, տվյալ ազգին համարժեք և կենսունակ կազմակերպվածությունը:

Թևպետ, որոշ ազգայնագետներ *քաղաքական համակարգը դիտել են* ոչ որպես ազգային ինքնության նախնական հատկանիշ, այլ *որպես* ազգային զարգացման պատմական *արդյունք,* ազգային ինքնության հետևանք[6]*:*

Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր ժողովրդի ռազմավարական քաղաքական նպատակն է ունենալ իր ինքնությանը համարժեք ազգային պետություն և կայուն քաղաքական համակարգ, ապա վերջինս կարող ենք դիտարկել որպես այն համապարփակ կառուցվածքը, որի սահմանները և գործողության շրջանակները սահմանվում են սահմանադրությամբ, իսկ այդ սահմանների ներսում համակարգվում ու դրսևորվում են տվյալ ազգին բնորոշ արժեքները, նորմերը և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները:

Ստ. Շահումյանն ազգի հատկանիշ համարում էր նաև պետությունը: «Հանրության մակարդակի որոշիչը ոչ միայն պետությունն է, այլև ողջ քաղաքական համակարգը»,- գրում է Հ. Մանուչարյանը: Քաղաքական համակարգը ճշտորեն համապարփակում է յուրաքանչյուր հանրույթի մակարդակին, այդ իսկ պատճառով ազգային քաղաքական համակարգը կարող է լինել որպես ազգային հանրորոշ հատկանիշ[7]:

Հասարակության քաղաքական համակարգը պետական և ոչ պետական սոցիալական ինստիտուտների միջև հարաբերությունների բարդ, բազմակողմանի համակարգ է, որը կատարում է որոշակի քաղաքական գործառույթներ՝ որոշակի դասերի և սոցիալական խմբերի շահերը պաշտպանելու և դրանք ներդաշնակեցնելու համար: Քաղաքական համակարգը կարող

---

[6] Տե՛ս Э. Геллнер, Нации и национализм, Оксфорд: Блэквелл, 1983., Տե՛ս Б. Андерсон, Воображаемые сообщества, Размышления об истоках и распространении национализма / Пер. с англ. В. Николаева; вступ. ст. С. П. Баньковской, М., 2016. Տե՛ս Anthony D. Smith. The Ethnic Origins of Nations. Oxford: Basil Blackwell, 1986. https://studfile.net/preview/5733520/ հասանելի է 18.12.2025:

[7] Տե՛ս Հ. Գ. Մանուչարյան, Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Եր., 1988, էջ 24-25:

է զարգանալ երկար ժամանակահատվածում (ԱՄՆ, Անգլիա), բայց այն կարող է նաև արագ, հեղափոխական և համապարփակ փոխվել (նախկին ԽՍՀՄ, Արևելյան Եվրոպայի երկրներ): Սա կախված է հասարակության անդամների սոցիալ-քաղաքական գործունեության աստիճանից և նրանց քաղաքական մշակույթից, որի էությունը մարդկային վարքագծի կարգավորման մեջ է: Այսօր հետազոտողներն ուսումնասիրում են ժամանակակից ազգային պետությունների քաղաքական համակարգերի բնութագրերը[8]:

21-րդ դարի պետականության տեսության մեջ քաղաքական համակարգը դարձել է ազգային գոյության պայման**:** Ավելին, քաղաքական համակարգն այլևս չի դիտվում որպես պատմական պատահականությունների արդյունք, այլ որպես *ազգային ինքնության պահպանման, վերարտադրության և զարգացման ստրատեգիական ենթակառուցվածք*:

Մարդկության վերջին տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ փոքր ազգերը (օրինակ՝ մեր՝ հայ ազգը- Մ.Դ.) կարող են պահպանել իրենց ինքնությունը, ինքնուրույնությունը, գոյատևել միայն այն դեպքում, երբ ունեն **ստաբիլ, կենսունակ, ազգային-համակարգված պետական կամ քաղաքական համակարգ**, որն ապահովում է լեզվի, մշակույթի, կրոնի, պատմական ինքնության արժեհամակարգի պահպանություն, սփյուռքի ու հայրենիքի միջև կապի, համագործակցության, ինքնավերականգնման գործիքակազմ, կանոնավոր հաստատուն կառավարման ներքին ու արտաքին անվտանգություն, զարգացում, ինքնավարություն:

Այսպիսով՝ 21-րդ դարի համատեքստում քաղաքական համակարգը դառնում է ոչ միայն պետության գործիք, այլ՝ **ազգի գոյատևման և զարգացման պայման**: *Այսինքն՝ հայրենական քաղաքական համակարգ ձևավորելն արդի քաղաքական ռազմավարություն է, իսկ ազգին քաղաքական համակարգով ապրեցնելը՝ պարտադիր:*

Ամերիկյան քաղաքագետ Դ. Իստոնը քաղաքական համակարգը բնութագրում է որպես արժեքների և ռեսուրսների կամային բաշխում, փոխազդեցություն, որոնց միջոցով հասարակության մեջ բաշխվում են հոգևոր և նյութական արժեքները: Ավելին, քաղաքական համակարգը բնութագրվում է **որպես ինքնազարգացող և ինքնակարգավորվող** օրգանիզմ, արտաքին ազդակներին ակտիվորեն հակազդող ուժ[9]:

Քանի որ քաղաքական համակարգն ինքնակարգավորվող և ինքնազարգացող օրգանիզմ է, ապա մեր ենթադրությունն է, որ ազգային ինքնության բոլոր հատկանիշների հիմքի վրա

---

[8] А. А. Артыкбаева, А.Т. Тилекматова, Современная трактовка понятия «Политическая система общества», Наука и новые технологии, № 1, 2014, ст 183.

[9] Sté u Д. Истон, Политическая система, М., 1953.

կառուցված *հայրենական քաղաքական համակարգը* կարող է պահպանել իր կայունությունը, և ավելին, որով էլ ակտիվորեն կարող է հակազդել բոլոր արտաքին կազմաքանդող ազդակներին: Դասական քաղաքական համակարգի կառուցվածքային ենթահամակարգերն են՝ նորմատիվ-իրավական, ինստիտուցիոն, գործառնական-հաղորդակցական, գաղափարական, մշակութային, տնտեսական, սոցիալական ենթահամակարգերը[10]:

- **Հետազոտական առաջին մեթոդաբանական մոտեցմամբ** ցույց տանք, թե ինչպես են ազգային հատկանիշները դրսևորվում, ՀՀ պետական-քաղաքական համակարգի կառուցվածքի՝ ինստիտուտների, նորմերի, հաղորդակցման, մշակութային, գաղափարական ենթահամակարգերի մեջ: Այսպես.

Տարածքի ազգային հատկանիշը ՀՀ պետական-քաղաքական համակարգում հանդես է գալիս ոչ միայն որպես ֆիզիկական սահման, այլ որպես բազմաշերտ կառուցվածքային տարր, որը ինստիտուցիոնալ[11], նորմատիվ, գաղափարական և մշակութային մակարդակներում ներգրավված է քաղաքական համակարգի ձևավորման և գործառման մեջ:

Լեզվի ազգային հատկանիշը ՀՀ պետական-քաղաքական համակարգում հանդես է գալիս որպես նորմատիվորեն ամրագրված, ինստիտուցիոնալացված[12] կառուցվածքային տարր, որը միաժամանակ կատարում է լեգիտիմացնող, ինտեգրող և հաղորդակցական գործառույթներ:

Ծագման հատկանիշը արդի քաղաքական համակարգում նորմատիվ-իրավական կամ կառավարման կառուցվածքների մակարդակում ուղղակիորեն չի ինստիտուցիոնալացվում: Այն անուղղակիորեն թույլ մակարդակով առկա է գաղափարական ենթահամակարգում՝ ազգային ինքնության, պատմական հիշողության, դիսկուրսների մեջ:

Հոգեկերտվածքի հատկանիշը ՀՀ պետական-քաղաքական նորմատիվ-իրավական համակարգում հանդես չի գալիս որպես պաշտոնական քաղաքական ինստիտուտ, սակայն այն ներգրավված է մշակութային և գաղափարական ենթահամակարգերում՝ ձևավորելով քաղաքական ընկալումներ, վարքագծային նորմեր և լեգիտիմ իշխանության ընկալումներ:

---

[10] Տե՛ս Քաղաքագիտություն, բուհական դասագիրք, ԵՊՀ. Եր., 2006, էջ 248:

[11] Տարածքային կառավարման ինստիտուտները ՀՀ-ում ներառում են կառավարությունը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ինչպես նաև մարզպետարաններն ու տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքի ավագանի, համայնքի ղեկավար): Դրանք գործում են ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի հիման վրա և ապահովում են պետական քաղաքականության իրականացումը վարչատարածքային միավորներում:

[12] Պետական լեզվի ինստիտուտները ՀՀ-ում ներառում են ՀՀ Սահմանադրությամբ և «Լեզվի մասին» օրենքով ամրագրված հայերենը որպես պետական լեզու, ինչպես նաև այդ նորմերի կիրառումն ապահովող պետական կառույցները՝ կրթության, պետական կառավարման և դատական համակարգերում: Դրանք կոչված են ապահովելու հայերենի պարտադիր կիրառությունը պետական, հանրային և պաշտոնական հաղորդակցության բոլոր ոլորտներում:

Տնտեսական հատկանիշը ՀՀ քաղաքական համակարգում հանդես է գալիս նյութական գործառնության մեջ, այն ինստիտուցիոնալացված է տնտեսական քաղաքականության, ռեսուրսների բաշխման և սոցիալ-տնտեսական կարգավորման մեխանիզմների միջոցով:

U*ցիալ-դասակարգային կառուցվածքային* հատկանիշը ՀՀ քաղաքական համակարգում արտահայտվում է սոցիալական խմբերի, մասնագիտական շերտերի և սոցիալ-տնտեսական դասերի շահերի ձևավորման, ներկայացման և մասնակի ինստիտուցիոնալացման գործընթացներով: Այն դրսևորվում է սոցիալական քաղաքականության, աշխատանքի և զբաղվածության կարգավորման, շահերի ներկայացման և քաղաքական մասնակցության մեխանիզմների միջոցով:

Գաղափարախոսության ազգային հատկանիշը ՀՀ քաղաքական համակարգում հանդես է գալիս ոչ համակարգված ու ամբողջացված, սակայն մասամբ հանդես է գալիս որպես արժեքային և գաղափարական հիմք: Այն մասամբ էլ դրսևորվում է պետական ռազմավարական և ոլորտային ծրագրերի, քաղաքական կուսակցությունների գործունեության, ինչպես նաև կրթության և մշակույթի ոլորտներում՝ նպաստելով քաղաքական իշխանության ձևավորմանը և ազգային նպատակների ընկալմանը:

Արդյունքում, Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում ազգային հատկանիշները *պահպանվում են հենց հատկանիշների դրսևորման մակարդակով*՝ հանդես գալով որպես արժեքային, մշակութային կամ գործառնական բաղադրիչներ, սակայն չեն ամբողջանում ինքնուրույն և ամբողջական քաղաքական ենթահամակարգերում: Դրանք ներգրավված են պետական-քաղաքական կառուցվածքի տարբեր շերտերում ոչ համակարգված ձևով, ինչի հետևանքով ազգային ինքնությունը քաղաքական համակարգում լիարժեք չի վերափոխվում համակարգաստեղծ սկզբունքի, այլ գործում է որպես ուղեկցող գործոն գործող ինստիտուցիոնալ համակարգի շրջանակներում:

- **Հետազոտության երկրորդ մեթոդաբանական մոտեցմամբ** նպատակ ունենք մշակել քաղաքական համակարգի ամբողջական մոդել՝ իր կառուցվածքային ենթահամակարգերով, որտեղ *ազգային բոլոր հատկանիշները վերածվում են քաղաքական կառուցվածքային ենթահամակարգերի*՝ ստեղծելով **Հայոց հայրենական քաղաքական ամբողջական համակարգի մոդել:**

Քանի որ ազգային հատկանիշները բաղկացած են էթնորոշ և հանրորոշ հատկանիշներից, հետևաբար հայրենական քաղաքական համակարգը կարող է բաղկացած լինել երկու հիմնական կառուցվածքից՝ *էթնորոշ կառուցվածքից*, որում ներառված են հայրենական տարածական,

լեզվական, ընդհանրության ծագման, հոգեկերտվածքի ենթահամակարգերը, և *հանրորոշ կառուցվածքից*, որում ներառված են Հայրենական տնտեսության, սոցիալ-խմբային, գաղափարախոսական ենթահամակարգերը:

«Ազգային հատկանիշների ինստիտուտացում-նորմավորում» մոդելի մեջ.

Հայրենական տարածական ենթահամակարգը կոչված է կառավարելու և համակարգելու ազգի տարածական ինքնությունը՝ ընդգրկելով ինչպես արդի պետական վարչական սահմանները, այնպես էլ հայկական բարձրավանդակում հայ ժողովրդի՝ որպես տեղաբնիկների պատմական հայրենիքի տարածքները և դրանց նկատմամբ ձևավորված նախապատմական[13], պատմական ու արդի քաղաքական, մշակութային և իրավաքաղաքական հարաբերությունները: Այն չի սահմանափակվում տարածքի ֆիզիկական կառավարմամբ, այլ իրականացնում է տարածքի քաղաքական իմաստավորման, տարածական հիշողության պահպանման և ապագայամետ ռազմավարական ծրագրավորման գործառույթներ: Այս ենթահամակարգում ձևավորվում են տարածական շարունակական, պատմական տարածքի հիշողության պահպանման, տարածքի սրբացման, տարածքային պատասխանատվության, ապագայամետ կառավարման նորմեր:

Հայրենական լեզվական ենթահամակարգը կոչված է կառավարելու, համակարգելու, քաղաքակրթական բոլոր փուլերում ձևավորված[14] տասնհինգ հազար տարեկան *հայոց այբուբենը*՝ այն գործառնելով մշակույթի՝ հոգևոր ու նյութական արտադրության բոլոր ձևերում, ապահովելով պետական կառավարման, կրթության, գիտության, մշակույթի և հասարակական հաղորդակցության մեջ լեզվական ինքնիշխանությունը, նորմավորվածությունը և սերունդների միջև անընդհատ փոխանցումը:

Հայրենական ընդհանրության ծագման ենթահամակարգը կոչված է կառավարելու, համակարգելու հայ ժողովրդի ծագման ընդհանրությունը՝ ներառյալ Հայկական գենետիկ ծագման հնությունն ու պատմական շարունակականությունը**,** ազգագրական, կենսաբանական և քաղաքակրթական ինքնության փոխանցումը՝ ապահովելով սերունդների միջև ժառանգական

---

[13] https://ostarmenia.com/aratta/ հասանելի է 18.12.2025:
https://hy.wikipedia.org/wiki/Արատտա#:~:text=Արատտան%20%եղել%20է%20աստվածապետական%20(կրոնապետական,էր%20երկրի%20ճակատագրին%20վերաբերող%20կարևոր հասանելի է 18.12.2025:

[14] https://webaram.com/biblio/document/the-evolution-of-armenian-alphabet հասանելի է 18.12.2025:
Հայերեն և համաշխարհային այբուբենների էվոլյուցիան՝ հրատարակված Մելքոն Արմեն Խանջյանի կողմից: Հայերեն այբուբենի էվոլյուցիայի աղյուսակ՝ քարե դարից մինչև մեր օրերը, 15000 տարվա զարգացման փուլերով: Հրատարակվել է Atla-ի կողմից 1976 թվականի ապրիլի 24-ին, ԱՄՆ-ում:

կապի գիտակցումը, ազգային ինքնության կայուն վերարտադրությունը և արտաքին ապակառուցողական, ծագումնաբանական աղավաղումների կանխումը[15]:

Հայրենական հոգեկերտվածքի ենթահամակարգը կոչված է կառավարելու և համակարգելու հայ ժողովրդի հավաքական հոգեբանական-արժեհամակարգային կառուցվածքի ձևավորումը և շարունակականությունը՝ ներառյալ ազգային բնավորության, վարքականոնների, արժանապատվության, պատասխանատվության, համերաշխության և հայրենասիրության նորմերի պահպանումն ու վերարտադրությունը:

Այս ենթահամակարգում ձևավորվում են ազգային արժանապատվության, հավաքական պատասխանատվության, փոխադարձ վստահության, հանրային համերաշխության, օրինապաշտ վարքագծի, աշխատանքի և ծառայության նկատմամբ պատվի, ինչպես նաև հայրենասիրական ինքնագիտակցության նորմերը, որոնք ապահովում են հասարակության ներքին համախմբվածությունը, պետականության հոգեբանական կայունությունը և սերունդների միջև ազգային ինքնության շարունակական վերարտադրությունը:

Հայոց հոգեկերտվածքի ազգային հատկանիշը կարող է և պետք է վերածվի հոգեկերտվածքի ենթահամակարգի**,** քանի որ *ազգային հոգեկերտվածքն իրականում պետականակիր քաղաքական վարքագծի,* հասարակական միասնության, իշխող արժեքների և քաղաքական կայունության հիմքերից է:

Հայրենական տնտեսության ենթահամակարգը կոչված է կառավարելու և համակարգելու ազգային տնտեսական կյանքը՝ ապահովելով տնտեսական ինքնիշխանությունը, ռազմավարական ռեսուրսների հանրօգուտ և պատասխանատու օգտագործումը, արտադրական ներուժի շարունակական աճը, աշխատանքի արժևորման և սոցիալական արդարության նորմերի իրականացումը, ինչպես նաև հասարակական բարեկեցության և սերունդների միջև տնտեսական պատասխանատվության կայուն վերարտադրությունը հայրենական քաղաքական համակարգի ընդհանուր նպատակների և արժեքների շրջանակում՝ սոցիալ-տնտեսական համերաշխության և տնտեսական անվտանգության ինստիտուտների միջոցով:

Հայրենական քաղաքական համակարգում սոցիալ-դասակարգային ենթահամակարգը ներառում է ինչպես ինստիտուցիոնալացված, այնպես էլ ոչ ինստիտուցիոնալ սոցիալական խմբեր և

---

[15] Լևոն Եպիսկոպոսյան https://boon.am/scientific/biology/introduction-genetic-geneology-levon-episkoposyan/ https://boon.am/scientific/biology/14-the-genetic-atlas-of-historic-armenia-genetic-geneology-levon-episkoposyan/ https://www.youtube.com/watch?v=Nah_j1APnoA, հասանելի է 18.12.2025:
(Հայերի գենետիկական արմատները, Լևոն Եպիսկոպոսյան, 02.05.2025, 1:00:52)Գենետիկական ճանապարհով ցույց է տրվում, որ հայերն այս տարածաշրջանում տեղաբնիկներ են և համատեղ կյանքով ապրել և արարել են ամենաքիչը վեց հազար տարի։)

շերտեր, որոնք հանդես են գալիս որպես ազգային շահերի կրողներ և իրենց ազդեցությունն իրականացնում են քաղաքական գործընթացների վրա տարբեր աստիճաններով՝ միջանկյալ կամ ինստիտուցիոնալացված ձևերով:

Հայոց գաղափարախոսության ազգային հատկանիշը հայրենական քաղաքական համակարգում կարող է և պետք է վերածվի **գաղափարական ենթահամակարգի**, քանի որ այն, նախ, ապահովում է «մեկ քաղաքական համակարգ – մեկ քաղաքական նպատակ-մեկ ընդհանուր քաղաքական շահ» սկզբունքով գործունեությունը, ձևավորում է ամբողջ ազգաբնակչությանը միավորող պետական-համակարգված գաղափար, որի սերնդեսերունդ փոխանցումը երաշխավորում է ազգային ինքնության, արժեքային շարունակականության և քաղաքական հիշողության պահպանումը: Միաժամանակ, գաղափարական ենթահամակարգը կատարում է քաղաքական նպատակադրումների, ռազմավարական ուղղությունների և հանրային վարքագծի գաղափարական համադրման գործառույթ՝ ապահովելով պետական իշխանության լեգիտիմությունը և հայրենական քաղաքական համակարգի ներքին կայունությունը: Գաղափարական ենթահամակարգում ինստիտուցիոնալ-նորմատիվ գործունեությանն են ենթարկվում ազգային- գաղափարախոսությունը, կրթությունը, դաստիարակությունը, քաղաքական մշակույթը և հիշողությունը, տեղեկատվությունը և հանրային և ազգային հաղորդակցումները, քաղաքական սոցիալիզացիան և քաղաքացիական դաստիարակությունը:

- **Հետազոտական երրորդ մեթոդաբանական մոտեցմամբ** համեմատական վերլուծության ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգը և հայրենական քաղաքական համակարգը բացահայտելով՝ դրանց ընդհանրություններն ու սկզբունքային տարբերությունները:

Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգը սահմանափակված է պետական սուվերեն տարածքով և գործող իրավաքաղաքական շրջանակներով, ապա հայրենական քաղաքական համակարգի տարածական ընդգրկվածությունը դիտարկվում է հայոց հնագույն քաղաքակրթական-ազգային պետական համակարգի պատմական տարածքի շրջանակներում[16]:

Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում հայոց լեզվի ընկալումն ու գործառույթը հիմնականում սահմանափակվում են Մաշտոցյան գրի և գրավոր մշակույթի ինստիտուցիոնալ շրջանակներով: Մինչդեռ հայրենական քաղաքական համակարգում հայոց

[16] Տե՛ս Ա. Մովսիսյան, Հայոց պետականությունը 5000-ամյա և 20-ամյա, ԵՊՀ հրատ., 2011:

լեզուն դիտարկվում է որպես բազմահազարամյա քաղաքակրթական լեզվական համակարգ, որի ձևավորումը և գործառույթը հետագծվում են մինչև պալեոլիթյան ժամանակաշրջան[17]: Այս մոտեցման շրջանակներում, օրինակ, Ա. Դավթյանի[18] աշխատություններում հիմնավորվում է հայերենի համահունչությունը շումերական գրական համակարգին, իսկ Լ. Ստեփանյանի[19] հետազոտությունները ցույց են տալիս, որ շուրջ 50 հազար տարվա մշակույթ ունեցող պոլինեզյան ժողովուրդների լեզվական շերտերում առկա են հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ:

Ծագման ազգային հատկանիշը Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում ծառայում է որպես հիշողության, արժեքների և գաղափարական հենք, սակայն չի վերածվում անմիջական քաղաքական ինստիտուտի: ՀՀ Քաղաքական համակարգում առկա չեն ազգի ծագման վերաբերյալ օբյեկտիվ, միջդիսցիպլինար և գիտականորեն հիմնավորված հետազոտություններ, ինչպես նաև դրանցից բխող նորմատիվ-արժեհամակարգային եզրահանգումներ: Արդյունքում՝ հայ ազգային ինքնությունը պետական-քաղաքական մակարդակում չի ձևակերպվում որպես իր տարածքում բազմահազարամյա տեղաբնիկության գիտականորեն ապացուցված և ինստիտուցիոնալացված իրականություն, ինչը թուլացնում է քաղաքական համակարգի ինքնակարգավորման և ինքնապաշտպանության, նույնիսկ՝ գոյապահպանության կարողությունը:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի, որտեղ հայի քաղաքական և քաղաքացիական վարքաբանության մեջ դեռևս առկա են խորհրդային շրջանից ժառանգված «կողմնակի եկամտի» հոգեկերտվածքային դրսևորումները, հայրենական քաղաքական համակարգում **հոգեկերտվածքի ենթահամակարգը** կոչված է հայի քաղաքական, քաղաքացիական, իրավական, ավանդական-բարոյական վարքում արթնացնելու, «գերընտիր՝ արարված Աստծու կողմից, զտարյուն արիացի, Նոյ Նահապետի սերնդին»[20] պատկանող մարդու իրավունքներ կրողի ինքնագիտակցությունը և նույնքան համարժեք էլ իր պահվածքում ապահովելու համապատասխան վարքագիծը, որը պարտադրում է սեփականության իրավունքով տեր լինելու իր ծագմանն ու իրական արմատներին, այն արժեքներին, որոնք առկա են իր հայրենի

---

[17] https://webaram.com/biblio/document/the-evolution-of-armenian-alphabet հասանելի է 18.12.2025:
[18] Տե՛ս Ա. Դավթյան, Շումերների երկրագործական ուղեցույցը հայերենն է, Եր., 2022:
[19] Տե՛ս Լ. Ստեփանյան, Հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Եր., 2015:
[20] Հ. Մանուչարյան, Արարատիզմ, Հայոց ազգայնականությունը պատմության շրջադարձային հանգրվաններում, Եր., ԵՊՀ, 2021, էջ 8:

հասարակության բոլոր՝ կրթական-մշակութային, սոցիալ-տնտեսական, և իրավա-քաղաքական ոլորտներում:

Սոցիալական ենթահամակարգը ներառում է սոցիալական խմբերի և մասնագիտական շերտերի շահերի ձևավորումը, ներկայացումը և կազմակերպումը քաղաքական համակարգի շրջանակում: Թեև սոցիալ-դասակարգային ազգային հատկանիշը տեսականորեն արտահայտվում է շահերի կազմակերպման, ազդեցության և քաղաքական մասնակցության միջոցով, սակայն իրական Հայաստանի ներկա պայմաններում այս գործընթացները մասնակի են և հաճախ միջանկյալ՝ քանի որ մեծ մասամբ կառավարվում են պետական կամ կուսակցական ինստիտուտների միջավայրում, ոչ թե սոցիալական խմբերի ինքնուրույն նախաձեռնությամբ:

Ազատ շուկայի պայմաններում հայրենական տնտեսության համակարգը դրսևորվում է ոչ թե կենցաղային առաջարկի-պահանջարկի շուկայի սահմանափակմամբ, այլ նրա ենթարկմամբ հայրենական ռազմավարական նպատակներին: Մինչդեռ ՀՀ տնտեսության համակարգը թերանում է այն առումով, որ ազատ շուկան գործարկվում է արժեքային և ազգային պատասխանատվությունից զուրկ՝ վերածվելով ինքնանպատակ տնտեսական մեխանիզմի: ՀՀ տնտեսությունում սեփականությունը հիմնականում ընկալվում է որպես «իմն է, ինչ ուզեմ՝ կանեմ», մինչդեռ հայրենական տնտեսությունում այն ընկալվում է որպես «իմն է, պատասխանատու եմ հայրենիքիս, ազգակցիս առաջ», ինչը պահանջում է, որպեսզի հողը, ջուրը և ընդերքը մնան ազգային վերահսկողության տակ և չօտարվեն, տնտեսական ռազմավարական ոլորտներում սահմանվի ազգային վերահսկողություն, ինչպես նաև սեփականատերն իրեն պարտավոր է ընկալել ոչ միայն որպես իրավաբանական անձ, այլ որպես հոգևոր-քաղաքական սուբյեկտ, ով գործում է ոչ միայն որպես իրավական կամ տնտեսական դերակատար, այլ նաև որպես արժեհամակարգ կրող, պատմական պատասխանատվություն ունեցող և հայրենական քաղաքական նպատակներին գիտակցաբար մասնակցող անձ:

ՀՀ քաղաքական համակարգում **գաղափարախոսությունը** չի ինստիտուցիոնալացվել որպես ինքնուրույն ենթահամակարգ, սակայն ինչ-որ ձևերով արտահայտվում է արժեքային, մշակութային և կրթական կարգավորումների շրջանակում՝ ունենալով ցրված, ոչ ամբողջական ազդեցություն քաղաքական գիտակցության ձևավորման վրա: Հայրենական քաղաքական համակարգում Պանարմենիզմը և Արարատիզմը՝ որպես Հայոց սերունդներին ուղեկցող

գաղափարական ամբողջական մեխանիզմ, սկսում են սահմանադրական նախագծից[21] և ներառվում են ամբողջ համակարգային-ինստիտուցիոնալ գործառույթներում:

РОЛЬ АРМЯНСКИХ НАЦИОНАЛЬНЫХ ОСОБЕННОСТЕЙ В ОТЕЧЕСТВЕННОЙ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЕ: НАУЧНЫЙ И УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ АНАЛИЗ

ДАВТЯН МЕЛАНЬЯ
доцент кафедры общих гуманитарных и
социально-экономических дисциплин,
Учебного подразделения спасательной службы и кризисного управления
Образовательного комплекса Министерства внутренних дел
Республики Армения, кандидат политических наук, доцент

Аннотация. Настоящая статья посвящена теоретико-методологическому исследованию одной из фундаментальных, исходных категорий отечественной политологии — обобщённой модели отечественной политической системы. В статье анализируется, во-первых, каким образом армянские национальные этноопределяющие особенности территории, происхождения, языка и менталитета, а также общественно определяющие особенности экономической жизни, социально-групповой структуры и идеологии первоначально проявляются в действующей политической системе Республики Армения; во-вторых, рассматривается процесс трансформации национальных особенностей в политические подсистемы; в-третьих, осуществляется сравнительный анализ политической системы Республики Армения и отечественной политической системы. Автор приходит к выводу, что:

- отечественная политическая система предоставляет возможность интеграции не только всех теоретических разработок армяноведения, но и научных трудов армянских учёных, работающих в различных областях науки, обеспечивая их систематизацию, институциональное внедрение и функциональное применение в рамках структурной и идеологической целостности отечественной политической системы при сохранении целостности отечественных ценностей;
- в условиях искусственного интеллекта и геополитической универсализации человечества, параллельно с вызовами сближения народов, интернационализации и ассимиляции, вновь сформируется современный политический запрос на неонационализацию**,** в результате чего произойдёт переоценка всех национальных характеристик. В логике данных процессов заново будут формироваться нации, складываться национальные государства нового типа, которые обретут собственную специфическую политическую субъектность в системе современных международных отношений. В соответствии с новыми требованиями армянское государство, благодаря своим национальным характеристикам и отечественной системе, будет иметь чёткое позиционирование в новом международном политическом пространстве;
- научный подход к общему происхождению нации формирует ту перспективу, согласно которой стремительное развитие этногенетики и генетики в будущем может стать новой основой самопознания человечества и этнической принадлежности. В результате этого в мире станет возможным формирование нового типа национальных объединений, которые будут опираться не только на историческую память и культурное самосознание, но и на научно обоснованные сочетания генетической

---

[21] Տե՛ս Շ. Շահամիրյան, Որոգայթ փառաց, Եր., 2002:

идентичности и самопознания. Эти процессы могут привести к новым политическим сдвигам — вплоть до формирования неонациональных государств.

Ключевые слова: отечественная политология, отечественная политическая система, армянские национальные особенности, неонационализация, новое национальное государство.

THE ROLE OF ARMENIAN ETHNO-CULTURAL FEATURES IN THE DOMESTIC POLITICAL SYSTEM: SCIENTIFIC, EDUCATIONAL AND METHODOLOGICAL ANALYSIS

DAVTYAN MELANYA
Associate Professor at the Chair of General Humanities and Socioeconomic Disciplines,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the
Republic of Armenia, PhD in Political Science

Abstract. This article is devoted to the theoretical and methodological study of one of the fundamental concepts of national political science, namely the general model of the national political system. It explores how Armenian ethno-cultural features, such as territory, origin, language, and mentality, as well as broader social characteristics, including economic life, socio-group structure, and ideology, are expressed in the functioning political system of the Republic of Armenia. The study further examines how these national features are transformed into distinct political subsystems. In addition, it provides a comparative analysis of the political system of the Republic of Armenia and the broader concept of the national political system. The research leads to the following conclusions:

- The national political system provides an opportunity to incorporate not only all the theoretical developments within Armenian studies, but also the works of Armenian scholars across various fields of science, ensuring their systematic coordination, institutional integration, and functional application within the structural and ideological integrity of the national political system, while preserving the wholeness of national values.
- In the context of artificial intelligence and global geopolitical universalization, alongside the challenges of interethnic convergence, internationalization, and assimilation, a contemporary political demand for neo-nationalization is likely to reemerge, resulting in a reassessment of national features. In the realm of this logic, nations will once again take shape, and new types of nation-states will be constituted, acquiring distinctive political subjectivity within the contemporary system of international relations. In accordance with these emerging dynamics, the Armenian state, owing to its national features and national system, will secure a clearly defined position within the evolving global political landscape.
- The scientific approach to the common origin of the nation shapes the perspective that the rapid development of ethnogenetics and genetics may, in the future, become a new foundation for human self-knowledge and ethnic affiliation. As a result, the formation of new types of national groupings may emerge worldwide, grounded not only in historical memory and cultural self-consciousness, but also in scientifically substantiated combinations of genetic identity and self-awareness. These processes may lead to new political shifts, including the formation of neo-national states.

Key words: domestic political science, domestic political system, Armenian national characteristics, neo-nationalization, new national state.

Գրականություն

1. https://vuzlit.com/936567/otechestvennaya_politologiya հասանելի է 18.12.2025:
2. М.В. Ильин, Отечественная политология: осмысление традиции //Политическая наука: Сб. научных трудов/РАН. ИНИОН. – М., 2001, с. 5-6.
3. Տե՛ս Հ. Մանուչարյան, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Եր., ԵՊՀ հրատ., 2002: Տե՛ս նաև Կ. Միրումյան, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմությունից, Եր., 2013:
4. П. Шаран, Сравнительная политология, 1992, часть 1, стр 47.
5. Տե՛ս Հ. Մանուչարյան, Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Եր., 1988, էջ 5-6:
6. Տե՛ս Э. Геллнер, Нации и национализм, Оксфорд: Блэквелл, 1983., Տե՛ս Б. Андерсон, Воображаемые сообщества, Размышления об истоках и распространении национализма / Пер. с англ. В. Николаева; вступ. ст. С. П. Баньковской, М., 2016. Տե՛ս Anthony D. Smith. The Ethnic origins of Nations. Oxford: Basil Blackwell, 1986.
7. Տե՛ս Հ. Մանուչարյան, Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Եր., 1988, էջ 24-25:
8. А. Артыкбаева, А.Т. Тилекматова, Современная трактовка понятия «Политическая система общества», Наука и новые технологии, № 1, 2014, ст 183.
9. Տե՛ս Д. Истон, Политическая система, М., 1953.
10. Տե՛ս Քաղաքագիտություն, բուհական դասագիրք, ԵՊՀ. Եր., 2006, էջ 248:
11. Տարածքային կառավարման ինստիտուտները ՀՀ-ում ներառում են կառավարությունը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ինչպես նաև մարզպետարաններն ու տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքի ավագանի, համայնքի ղեկավար): Դրանք գործում են ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի հիման վրա և ապահովում են պետական քաղաքականության իրականացումը վարչատարածքային միավորներում:
12. Պետական լեզվի ինստիտուտները ՀՀ-ում ներառում են ՀՀ Սահմանադրությամբ և «Լեզվի մասին» օրենքով ամրագրված հայերենը որպես պետական լեզու, ինչպես նաև այդ նորմերի կիրառումն ապահովող պետական կառույցները՝ կրթության, պետական կառավարման և դատական համակարգերում: Դրանք կոչված են ապահովելու հայերենի պարտադիր կիրառությունը պետական, հանրային և պաշտոնական հաղորդակցության բոլոր ոլորտներում:
13. https://ostarmenia.com/aratta/, հասանելի է 18.12.2025:
https://hy.wikipedia.org/wiki/Արատտա#:~:text=Արատտան%20%եղել%20է%20աստվածապետական%20(կրոնապետական,էր%20երկրի%20ճակատագրին%20վերաբերող%20կարևոր հասանելի է 18.12.2025
14. https://webaram.com/biblio/document/the-evolution-of-armenian-alphabet հասանելի է 18.12.2025
Հայերեն և համաշխարհային այբուբենների էվոլյուցիան՝ հրատարակված Մելքոն Արմեն Խանջյանի կողմից: Հայերեն այբուբենի էվոլյուցիայի աղյուսակ՝ քարե դարից մինչև մեր օրերը, 15000 տարվա զարգացման փուլերով: Հրատարակվել է Atla-ի կողմից 1976 թվականի ապրիլի 24-ին, ԱՄՆ-ում:
15. https://boon.am/scientific/biology/introduction-genetic-geneology-levon-episkoposyan/
https://boon.am/scientific/biology/14-the-genetic-atlas-of-historic-armenia-genetic-geneology-levon-episkoposyan/
https://www.youtube.com/watch?v=Nah_j1APnoA, հասանելի է 18.12.2025
(Հայերի գենետիկական արմատները, Լևոն Եպիսկոպոսյան, 02.05.2025, 1:00:52)Գենետիկական ճանապարհով ցույց է տրվում, որ հայերն այս տարածաշրջանում տեղաբնիկներ են և համատեղ կյանքով ապրել և արարել են ամենաքիչը վեց հազար տարի:)
16. Տե՛ս Ա. Մովսիսյան, Հայոց պետականությունը 5000-ամյա և 20-ամյա, ԵՊՀ հրատ., 2011:
17. https://webaram.com/biblio/document/the-evolution-of-armenian-alphabet հասանելի է 18.12.2025:

18. Տե՛ս Ա. Դավթյան, Շումերների երկրագործական ուղեցույցը հայերենն է, Եր., 2022։
19. Տե՛ս Լ. Ստեփանյան, Հայ-պոլինեզյան լեզվամշակութային ընդհանրություններ, Եր., 2015։
20. Հ. Մանուչարյան, Արարատիզմ, Հայոց ազգայնականությունը պատմության շրջադարձային հանգրվաններում, Եր., ԵՊՀ, 2021, էջ 8։
21. Տե՛ս Շ. Շահամիրյան, Որոգայթ փառաց, Եր., 2002։

Հոդվածը գրախոսվել է 05.02.2026
Ներկայացվել է տպագրության 09.02.2026